ԳՐՔԵՐՈՒ ՀԵՏ

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ԼՌՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՍԿՍՈՒՄ Է ԲԱՐԲԱՌԵԼ...

ՎԵՐԺԻՆԷ ՍՎԱԶԼԵԱՆ
Բանասիրական գիտութիւնների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի առաջատար գիտաշխատող



Դոկտ. Ռուբինա Փիրումեանի աշխատասիրութիւնը

Մեր շրջանի մտաւորականներէն, գրականագէտ Ռուբինա Փիրումեանի նոր աշխատութեան մասին անդրադարձած ենք: Նորէն կ'անդրադառնանք աւելի մանրամասնօրէն, աւելի մասնագիտական մօտեցումով, մասնագէտի մը կողմէ:

ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-ինստիտուտը վերջերս լոյս է ընծայել «Հայոց Ցեղասպանութեան մասին անգլերէն ուսումնասիրութիւններ եւ հետազօտութիւններ» շարքի առաջին հատորը, որը նուիրուած է Լոս Անճելըսի UCLA համալսարանի հայագիտական ամբիոնի գիտաշխատող, գրականագէտ դոկտոր Ռուբինա Փիրումեանի «And Those Who Continued Living In Turkey after 1915» («Իսկ նրանք, ովքեր շարունակեցին ապրել Թուրքիայում 1915-ից յետոյ») անգլերէն ուսումնասիրութեանը՝ 277 էջ:

Հատորը մաս է կազմում հեղինակի եռահատոր մի մեծ ծրագրի, որը պիտի ամփոփի ինչպէս սփիւռքահայ, այնպէս էլ խորհրդահայ երկրորդ եւ երրորդ սերունդների անդրադարձը Հայոց ցեղասպանութեանը, թէ ինչպէ՞ս ծնողների, մեծ հայրերի եւ մեծ մայրերի ողբերգական անցեալի յիշողութիւնները փոխանցուել են նրանց եւ ազդել նրանց աշխարհայեացքի, կեանքի ընկալման, ի վերջոյ՝ նրանց ինքնութեան վրայ. եւ այդ բոլորը հայ եւ օտար գեղարուեստական գրականութեան միջոցով:

Սոյն հատորում Ռ. Փիրումեանն առաջին անգամ գիտական խիզախութեամբ հետազօտութեան ասպարէզ է ընտրել այն թուրք եւ հայ գրողներին, ովքեր երկարատեւ լռութիւնից յետոյ վերջապէս արծարծում են այդ կարգի թեմաներ: Ուսումնասիրութեան մէջ հեղինակը քննութեան է առնում հայկական ինքնութեան յետեղեռնեան ձեւախեղումների արտացոլումը թուրքական եւ ստամպուլահայ գեղարուեստական գրականութեան մէջ: Հեղինակն անդրադառնում է հանրապետական Թուրքիայի ամբողջ պատմութեան ընթացքում ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների բռնադատմանն ու խտրականութեան մթնոլորտում հայ ժողովրդի անցեալի կրած հաւաքական տառապանքներին, որոնք երկար ժամանակ թաղուած մնացել էին լռութեան մէջ: Յաջորդական իշխանութիւնները արգելել էին հայոց պատմութեան, աշխարհագրութեան եւ նման զգայուն նիւթերի դասաւանդումը հայկական դպրոցներում՝ կանխելով պատմական յիշողութեան բնականոն, սերնդեսերունդ փոխանցումը: Թուրքական իշխանութիւնների՝ Հայոց Ցեղասպանութեան իրողութեան հետեւողական ուրացման եւ մօտիկ անցեալի նկատմամբ ցուցաբերուած խտրական մօտեցման հետեւանքով մոռացութեան մատնուեց Հայկական հարցը Թուրքիայում: Քաղաքական ու ընկերային ճնշուածութեան այդ պայմաններում «ցեղասպանութիւնը վերապրած ու Թուրքիայում իր կեանքը շարունակող հայ մարդը ինչպէ՞ս է ընկալել ու ընկալում իր ազգային ինքնութիւնը եւ ինչպէ՞ս է պահել այդ ինքնութիւնը»: Հարցեր, որոնք մտահոգում են հեղինակին, եւ նա հանգամանօրէն քննութեան է առնում ցեղ, լեզու, պատմութիւն, մշակոյթ, աւանդոյթներ, հոգային պատկանելութիւն եւ այլ ազդակներ, որոնցմով ձեւաւորւում է ազգային ինքնութեան բարդ կառոյցը: Հեղինակն այդ ելակէտից ուսումնասիրում է ցեղասպանութիւնից որեւէ կերպով փրկուած այն հայերի հոգեբանական բարդոյթները, որոնք կամովին կամ պարտադրանքով մնացել են Թուրքիայում՝ զրաղեցնելով իրենց տեղը թուրք հասարակութեան մէջ:

Հեղինակն այդ լայն համայնապատկերի մէկ ծայրում տեսնում է այն անհատներին՝ մեծ մասամբ կանանց ու երեխաներին, որոնց մի որեւէ թուրք, քուրդ կամ արաբ «փրկել» է՝ գնել կամ առեւանգել եւ բռնի կրօնափոխել: Նրանք շարունակել են ապրել մահմետական միջավայրում, երեխաներ են մեծացրել: Սակայն գոյութիւն ունեն ընտանիքներ կամ ընտանիքների խմբեր, որոնք մահմետականութիւն ընդունելով զերծ են մնացել տեղահանութիւնից ու ջարդերից: Նրանցից ոմանք օտարացել ու ձուլուել են իսլամ հասարակութեան մէջ, իսկ ոմանք՝ առերեւոյթ պահել են մահմետականութիւնը, բայց գաղտնի դաւանել քրիստոնէութիւն՝ դառնալով ծպտեալ հայեր, ոմանք էլ՝ յարմար առիթն օգտագործելով, վերադարձել են իրենց արմատներին, բայց, հայածանքներին չդիմանալով, լքել են իրենց ծննդավայրը, փոխադրուել Ստամպուլ կամ արտասահմանեան երկրներ՝ նպաստելով Թուրքական իշխանութիւնների հետապնդած գերնպատակին՝ «երկրի ներսը մաքրել հայկական տարրից»:

Համայնապատկերի միւս ծայրում հեղինակը տեսնում է ստամպուլահայ համայնքը, որը համարւում է կրօնական փոքրամասնութիւն եւ օրէցօր նուազում է: Անցեալում նա գրեթէ միշտ լռութիւն է պահպանել: Եւ ինչպէս թուրք սոցիոլոգ, սոր Ֆաթմա Միւգէ Գեօչէքն եօթանասունհինգ տարի մինչեւ ստամպուլահայ գրո մարձակութիւն գտաւ իսլամ բրակութեանը պատմելու տ նութեան ու ջարդերի մասին այնքան կարեւոր մասն են նրա ու նրա նախորդների տական եւ հաւաքական յ թեան: Ռ. Փիրումեանը եւս «Վերջին տարիներին իրա փոխուած է Թուրքիայում: ուած է լռութեան վարագոյ նաւանդ՝ դրսում ապրող մտաւորականները փորձում ուի նստել անցեալի հետ ու յ բերել իրենց հայրենիքի պ թեան մութ կամ բոլորովին էջերը»: Նա անդրադառ թուրք ազգային ծայրահեղա րի կողմից «Ակօս»ի խմ Հրանդ Տինքի սպանութեա յեղաշրջեց թուրք հասարակ նը: Նա յայտարարում էր, թուրք չէ, այլ՝ հայ է Թուլ այսինքն՝ հարցականի տակ նում «Թուրք ինքնութեան» փարը: Տինքը որոնում էր փոխ հայերին, խրախուսո արիւն կրող, հայ նախնի թուրքերին, որոնք պէտք նայն իրենց ազգային ինքն ի վերջոյ, Հրանդ Տինքն անկ յայտարարում էր, որ 191 տահաճը ցեղասպանութիւն Այնուհետեւ հեղինակն դառնում է թուրք այնպիսի ւոր մտաւորականների ստեղ ծութիւններին, ինչպիսին Եալչընն է իր «Հոգիս քեզ խայտայ» գրքով: Նա եւս դակիցների՝ Թաներ Աքչամ Քօքերի եւ շատ ուրիշնե սկզբում ոչինչ չի իմացել մասին: Եւ ինչպէս ինքն է վանել, ինքը եւս զպրոցում է, որ «Հայերը դաւաճան որոնք Թուրքիայի թշնամի միացած փորձեցին երկրի ի թիւնը տապալել»: Սակայ նը յետագայում ծանօթաց իրադարձութիւններին եւ բացարձակ ուրացմանը, ակ եւ ականջալուր եղաւ իսլա հայերի նկատմամբ շարու խտրականութեանն ու հար եւ առաջին թուրքն էր, տաքրքրուեց, հանգամանք առաւ նրանց արգելուած ցութեան դատապարտուա մութիւնը՝ ի յայտ բերելով իրականութիւնը:

Հեղինակն անդրադառնու Օսման Քօքերի գրուածքնե պէս նաեւ համշենահայե տարրուած կրօնափոխո առերեւոյթ կրօնափոխ «Թաքուն» կամ «ծպտեալ» ձանց, որոնք յաճախ պատ վերադառնալ իրենց արմա Գրքում քննութեան են նաեւ քուրդ գրող Մեհմեդ թուրք գրողներ Ֆեթհիյ Օրհան Փամուքի, Էլիֆ Շա այլոց ստեղծագործութի նկարագրուած, ստիպողա զամանքներում մահմետ թիւն ընդունած, բայց իրե ցի արմատները չմոռացա ներր, որոնք տասնամեա ընակ լռել են՝ հոգու խոր թեղած պահելով իրենց ողբերգութիւնը:

Այնպէս որ, լռութեան պարտուած պատմութիւնը բարբառել...

Announcing the Opening of a New Medical Office in Glendale
Jasbir S. Sandhu, M.D.
Board Certified Dermatologist & Cosmetic Surgeon
Now Offering
LASER HAIR REMOVAL
● All Areas ● Excellent Long-Term Results ● All Skin Types.
1500 S. Central Ave., Ste. 221, Glendale, CA 91204 ● 818-459-6193
www.sandhumd.com
ASBAREZ/0084-7861